ՎԴ/9179/05/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 հունվարի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Էդգար Սեդրակյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/9179/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ավետիս Սահակյանը 2023 թվականի նոյեմբերի 9-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Ավետիս Սահակյանին զբաղեցրած պաշտոնում

վերականգնելու, Ավետիս Սահակյանի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու, նրա օգտին ՀՀ ՆԳՆ-ից նրա՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձ բռնագանձելու, աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինության դեպքում՝ ՀՀ ՆԳՆ-ին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 2023 թվականի հոկտեմբերի 1-ից միջին աշխատավարձի չափով հատուցում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուպատիկի չափով վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ վարչական գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 23-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 20-րդ հոդվածի 1-ին մասին և 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, 3-րդ հոդվածի 1-5-րդ մասերին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 15-րդ հոդվածի 4-րդ մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածին, 38-րդ հոդվածի 1-ին մասին, 264-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, 210-րդ հոդվածի 1-ին մասին՝ ՀՀ վարչական դատարանը

2024 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում Ավետիս Սահակյանը ներկայացված հայցադիմումով որպես հիմնական պահանջ խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանը, որով լուծվել է Ավետիս Սահակյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը: Ընդ որում, հարկ է փաստել, որ 29.06.2023 թվականի աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Ավետիս Սահակյանը աշխատանքի է ընդունվել որպես ՀՀ ՆԳՆ-ի պետական ռեզերվների ոչ պարենային ապրանքների պահպանման վարչության պետական պահուստի պահպանության բաժնի պահակ:*

Դատարանն արձանագրում է, որ 28.11.2024 թվականի դատական նիստի ընթացքում հայցվոր և պատասխանող կողմերն ընդունեցին և հաստատեցին, որ հայցվոր Ավետիս Սահակյանի հաստիքը համապատասխանում է քաղաքացիական աշխատանք իրականացնող անձի հաստիքին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները և դրանք կիրառելով վերոգրյալ փաստական հանգամանքների նկատմամբ՝ Դատարանը գտնում է, որ սույն վեճը չի հանդիսանում հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճ, քանի որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ռեզերվների գրասենյակի ոչ պարենային ապրանքների պահպանման վարչության պետական պահուստի պահպանության պահակի պաշտոնն իր տեսակով քաղաքացիական աշխատանք կատարողի հաստիք է:

Հետևաբար, Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը ծագել է քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում և կրում է աշխատանքային բնույթ՝ ներառված է աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում և ենթակա է քննության ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարանում, ըստ այդմ՝ դուրս է վարչական դատարանի ընդդատության շրջանակներից:

(…)

Վերոգրյալ ամբողջի հաշվառմամբ՝ Դատարանը եզրահանգում է, որ սույն գործով վեճը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չլինելու պայմաններում՝ այն ենթակա է վերահասցեագրման և քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգով առաջին ատյանի դատարանում, քանի որ սույն վեճի բնույթը չի բխում հանրային իրավահարաբերություններից»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին և 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին, 26-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ և 9-րդ մասերին, 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, 9-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 և 2023 թվականի մարտի 2-ի թիվ ԵԴ/27468/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Տվյալ դեպքում, ՀՀ վարչապետի «ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 14.03.2023 թվականի թիվ 270-Լ որոշումը, որով ամրագրված դրույթների պահանջներին համապատասխան նախարարության կառավարման և ղեկավարման իրականացումը պատկանում է հանրային իրավունքին, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարության*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 63-70:

գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանն ուղղված է ՀՀ ներքին գործերի նախարարության կառավարման և ղեկավարմանը, որն իրացվել է ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից ընդունված անհատական հրամանի տեսքով:

Այլ կերպ ասած՝ ներկա պարագայում առկա է հանրային վեճից բխող իրավահարաբերություն և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանը կայացվել է ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում և ուղղված է եղել ՀՀ վարչապետի վերը նշված որոշմամբ ամրագրված կանոնների պահպանմանը:

Բացի վերոգրյալից՝ քննարկման առարկա վեճի հանրային բնույթ կրելը հիմնավորվում է նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ըստ գործում առկա փաստերի՝ կողմերը չեն գտնվում իրավահավասար հարաբերություններում, վերջիններիս միջև առկա չէ մասնավոր վեճ և այն մասնավոր հարաբերությունից տարանջատված է թե սուբյեկտային կազմով, թե բովանդակությամբ և թե օբյեկտով: Ավելին՝ մասնավոր հարաբերությունները կարգավորող նորմերը կանոնակարգում են մասնավոր սուբյեկտների միջև ծագած հարաբերությունները, որի ընթացքում պետության ներգրավվածությունն ավելի սահմանափակված է, որը սույն գործի շրջանակներում բացակայում է:

Սույն վարչական գործով մի կողմ է հանդիսանում ՀՀ ներքին գործերի նախարարությունը, որն իր հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում ապահովում է այլ սուբյեկտների ենթարկվածությունը, այսինքն գործ ունենք վերադասության և ստորադասության հարաբերությունների հետ: Տվյալ դեպքում դա դրսևորվում է ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից ընդունված թիվ 897-Ա հրամանով:

(…)

Վերոգրյալ նորմերի բովանդակային վերլուծության համատեքստում դատարանը գտնում է, որ ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանը վիճարկելու հայցը բխում է դեռևս ուժը չկորցրած ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի և դեռևս ուժի մեջ չմտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի դրույթներից, ուստի դատարանի համոզմամբ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճերով հայցադիմումները առաջին ատյանի դատարան կարող են ներկայացվել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/9179/05/23 գործն ըստ Ավետիս Սահակյանի հայցի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Ավետիս Սահակյանին զբաղեցրած պաշտոնում վերականգնելու, Ավետիս Սահակյանի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու, նրա օգտին ՀՀ ՆԳՆ-ից նրա՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձ բռնագանձելու, աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինության դեպքում՝ ՀՀ ՆԳՆ-ին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 2023 թվականի հոկտեմբերի 1-ից միջին աշխատավարձի չափով հատուցում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 76-80:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նշված օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները

գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

10. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

11. ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:*

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին համաձայն՝ *«Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, հանրային ծառայության անցնելու պահանջները, հանրային պաշտոնների դասակարգումը, հանրային ծառայողի հիմնական իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, պաշտոնների առանձնահատկությունները, բարեվարքության համակարգը, կարգավորվում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման հետ կապված, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ հարաբերությունները»:*

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված*

լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները»:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում»:*

12. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հանրային և այլընտրանքային պաշտոնների դասակարգումը սահմանվում է համապատասխանաբար «Հանրային ծառայության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով:

13. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝*

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը. (...)»:

14. Նախորդ կետում նշված դրույթից հետևում է, որ վերոնշյալ գործերը Վարչական դատարանում քննության ենթակա լինելու համար առաջնահերթ պայման է տվյալ իրավահարաբերությունները «Հանրային ծառայության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով կարգավորված լինելու հանգամանքը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության 27-րդ կետի 3-րդ և 10-րդ ենթակետերով, «Ավետիս Ահարոնի Սահակյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ 897-Ա հրամանով 01.10.2023 թվականից լուծել է ՀՀ

ներքին գործերի նախարարության պետական ռեզերվների գրասենյակի ոչ պարենային ապրանքների պահպանման վարչության պետական պահուստի պահպանության բաժնի պահակ Ավետիս Սահակյանի հետ 01.07.2023 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը,

- Ավետիս Սահակյանը 2023 թվականի նոյեմբերի 9-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Ավետիս Սահակյանին զբաղեցրած պաշտոնում վերականգնելու, Ավետիս Սահակյանի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու, նրա օգտին ՀՀ ՆԳՆ-ից նրա՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձ բռնագանձելու, աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինության դեպքում՝ ՀՀ ՆԳՆ-ին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 2023 թվականի հոկտեմբերի 1-ից միջին աշխատավարձի չափով հատուցում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուպատիկի չափով վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին[3],

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն վեճը չի հանդիսանում հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճ, քանի որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ռեզերվների գրասենյակի ոչ պարենային ապրանքների պահպանման վարչության պետական պահուստի պահպանության պահակի պաշտոնն իր տեսակով քաղաքացիական աշխատանք կատարողի հաստիք է, հետևաբար սույն վեճը ծագել է քաղաքացիահրավական հարաբերությունների շրջանակում և կրում է աշխատանքային

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

բնույթ՝ ներառված է աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում և ենթակա է քննության ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարանում, ըստ այդմ՝ դուրս է վարչական դատարանի ընդդատության շրջանակներից[4],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ տվյալ պարագայում առկա է հանրային վեճից բխող իրավահարաբերություն և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանը կայացվել է ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից հանրային իշխանական լիազորությունների իրացման արդյունքում և ուղղված է եղել ՀՀ վարչապետի վերը նշված որոշմամբ ամրագրված կանոնների պահպանմանը, ավելին՝ կողմերը չեն գտնվում իրավահավասար հարաբերություններում, վերջիններիս միջև առկա չէ մասնավոր վեճ և այն մասնավոր հարաբերությունից տարանջատված է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով[5]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն գործով հայցվոր Ավետիս Սահակյանը ՀՀ ներքին գործերի նախարարությունում աշխատել է որպես *պետական ռեզերվների գրասենյակի ոչ պարենային ապրանքների պահպանման վարչության պետական պահուստի պահպանության բաժնի պահակ*, ինչը նախատեսված չէ հանրային կամ այլընտանքային ծառայության պաշտոնների անվանացանկում: Նշվածից հետևում է, որ պետական ռեզերվների գրասենյակի ոչ պարենային ապրանքների պահպանման վարչության պետական պահուստի պահպանության բաժնի պահակի պաշտոնին անցնելու և պաշտոնից ազատելու հետ կապված վեճերը բխում են մասնավոր իրավահարաբերությունից:

---

[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

17. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/9179/05/23 գործն ըստ Ավետիս Սահակյանի հայցի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Ավետիս Սահակյանին զբաղեցրած պաշտոնում վերականգնելու, Ավետիս Սահակյանի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու, նրա օգտին ՀՀ ՆԳՆ-ից նրա՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձ բռնագանձելու, աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինության դեպքում՝ ՀՀ ՆԳՆ-ին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 2023 թվականի հոկտեմբերի 1-ից միջին աշխատավարձի չափով հատուցում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուպատիկի չափով վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Ավետիս Սահակյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/9179/05/23 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/9179/05/23 գործն ըստ Ավետիս Սահակյանի հայցի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի թիվ 897-Ա հրամանն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Ավետիս Սահակյանին զբաղեցրած պաշտոնում վերականգնելու, Ավետիս Սահակյանի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու, նրա օգտին ՀՀ ՆԳՆ-ից նրա՝ հարկադիր պարապուրդի ամբողջ

ժամանակահատվածի համար աշխատավարձ բռնագանձելու, աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինության դեպքում՝ ՀՀ ՆԳՆ-ին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 2023 թվականի հոկտեմբերի 1-ից միջին աշխատավարձի չափով հատուցում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուպատիկի չափով վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԷԴԳԱՐ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ